ԱՆՀՈՒՆ Է ԱՅՍ ՕՐԸ

Անհուն է այս օրն ինձ համար,
Ա՜հ, լինէր գինի ու հաշի՜շ ...
Ի զուր է քո սէրը, անյարմար,
Տենչերը հին են, անհաշի՜ւ ...

Մի՛ տխրիլ, կ'անցնի քո սէրը,
Կ'ուզէի քեզ սիրել, բայց աւա՜ղ,
Չես կարող դու խաղալ իմ դերը...
Թո՛ղ ինձ իմ ցաւի հետ խաղալ :

ԱՄԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ ...

Ամայութեան մէջ փողոցի՝
Անցնում են լուռ երկու ըստուեր.—
Չէ խօսում մին՝ որ չը խոցի
Միւսի խոնարհ սիրտը աւեր ...:

Ձերդ ոգիներ մունջ ու մոլար,
Ուրուականներ մեռած սիրոյ ... —
Տանջւում է մին՝ ու պիտի լայ,
Կը մռնայ միւսն մինչ երեկոյ ...:

Չէ խօսում մին՝ որ չը խոցի
Միւսի խոնարհ սիրտը աւեր ...
Ամայութեան մէջ փողոցի՝
Անցնում են լուռ երկու ըստուեր...:

ԿԱՐՕՏ

Ահա արծաթ շողի կածան,
Ինձ կը տանի այն հեռաւոր
Դաշտն ուր ծաղկում է ծիածան,
Ուր ծաղիկներն են թեւաւոր ...:

Ուր ադամանդն արեգակի՝
Ցօղ է միայն երկնի քիւրեղ,
Հովն հեռաւոր զօրանջ զանգի,
Արձագանքի ծիծաղն ահեղ ...:

Ուր սէրն երանգ է բուրաւէտ,
Եւ երազանք, ջրվէժ լոյսի,
Հոգին յաւէտ հոսող մի գետ՝
Ափին ծաղկած ծառը յոյսի:

Բայց չը քացաւ շողի կածան,
Հեռու ամպին թողեց կարօտ ...
Քո յիշատակն էր ծիածանն,
Որ ինձ փայլեց այս առաւօտ:

Ց. ԿՈՍՏԱՆԴԵԱՆ

digitised by A.R.A.R.@